«ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» ՓԲԸ
"ARMENIAN WATER AND SEWERAGE" CJSC

www.armwater.am

23.09.15թ. N: Պ/1-03/2284

Ձեր N:____________________

*Հաստատված է*
*ՀՀԳՆՋՏՊԿ-ՀՋԿԸ-ՇՀԾՁԲ-15/3-15/32 ծածկագրով*
*շրջանակային համաձայնագրերի միջոցով*
*գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի*
2015 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 15/32-1 որոշմամբ
***«ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» ՓԲԸ***

ՀՐԱՎԵՐ

***«ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ***

Հարգելի մասնակից

Նախքան հայտ կազմելը և ներկայացնելը խնդրում ենք մանրամասնորեն ուսումնասիրել սույն հրավերը, քանի որ հրավերին չհամապատասխանող հայտերը ենթակա են մերժման:

«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն (այսուհետև՝ Պատվիրատու)՝ **Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերման** նպատակով կազմակերպել է **«ՀՀԳՆՋՏՊԿ-ՀՋԿԸ-ՇՀԾՁԲ-15/3-15/32»** ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը (այսուհետև՝ ընթացակարգ) և տրամադրում է սույն հրավերը:

Սույն հրավերը կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության, այդ թվում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ Կարգ) և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան և նպատակ ունի Պատվիրատուի կողմից հայտարարված ընթացակարգին մասնակցելու մտադրություն ունեցող անձանց (այսուհետև՝ Մասնակից) տեղեկացնելու ընթացակարգի պայմանների՝ գնման առարկայի, ընթացակարգի անցկացման, հաղթողին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու ընթացակարգի հայտը պատրաստելիս:

Հայտեր կարող են ներկայացնել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ շրջանակային համաձայնագրեր կնքած հնարավոր մասնակիցները:

Սույն ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել *ք.Երևան, Վարդանանց փակ.8, 5-րդ հարկ* հասցեով փաստաթղթային ձևով մինչև սույն հրավերը հրապարակվելու օրվան հաջորդող «7»-րդ աշխատանքային օրվա ժամը «$11^{00}$»-ը և դրանք պետք է կազմված լինեն հայերեն:

Արգելվում է միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն գործընթացին, բացառությամբ պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների և (կամ) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) գնումների գործընթացին մասնակցության դեպքերի:

Սույն ընթացակարգի հրավերը ստանալու համար անհրաժեշտ է դիմել Պատվիրատուին սույն հրավերի հրապարակման օրվանից մինչև՝ «7»-րդ աշխատանքային օրվա ժամը «$11^{00}$»-ը: Ընդ որում, փաստաթղթային ձևով հրավեր ստանալու համար Պատվիրատուին պետք է ներկայացնել գրավոր դիմում: Պատվիրատուն ապահովում է փաստաթղթային ձևով հրավերի տրամադրումն անվճար:

Էլեկտրոնային ձևով հրավեր տրամադրելու պահանջի դեպքում Պատվիրատուն ապահովում է հրավերի՝ էլեկտրոնային ձևով տրամադրումը դիմումն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում:

Սույն հրավերով նախատեսված կարգով հրավեր չստանալը չի սահմանափակում մասնակցի՝ սույն ընթացակարգին մասնակցելու իրավունքը:

Սույն ընթացակարգի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Սույն ընթացակարգի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

*«Հայջրմուղկոյուղի»* ՓԲԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ hho@armwater.am:
Հեռ՝ (055) 55-78-35:
Պատվիրատու՝ ***«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ***

**Գլխավոր տնօրեն՝** **Պ. Լորեն**

Ադմինիստրատիվ և ֆինանսական տնօրինություն
Հեռ. 54 06 85